

少府少卿毛子平集

卷之三

毛子平集

毛子平集

毛子平集

b

№ 16

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐԻՏԱՍՈՎԱՐԴ ԹԻՒՐՖԻ

ԳՐԵՑ

Ա. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

ԳԻՆՆ Է 50 ՄԵՆՏԻՄ

ՊԱՐԻԶ

1908

Զ Օ Ն

Իմ թանկապին ընկեր

ԱՐԱՄ ԱՉԸԳՊԱՇԵԱՆԻՆ

Քե՛զ, թանկապին ընկե՛ր, քե՛զ եմ նուիրում զըր.
Քոյիս, քեղ՝ որ ՔՄԱՆ տարիներից ի վեր՝ քո օրի.
Նակելի գործունէութեամբ ՀԱՅ ՅԵՎԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ուահվիրաններից մէկն ես եղել և անձիդ վրայ արտա.
ցոլացրել՝ ազնիւ, անվեշեր և անյողողող Յեղափո.
խականի բոլոր յատկութիւնները :

Ընկերու

Ա. ՍԵՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

6 Փետր. 1908
ՊԱՐԻԶ

Յ Ա Պ Ա Զ Ե Բ Ե Ն

—o—

Ներկայ աշխատութիւնը զբուած է եղել 1899-ին
և հրատարակուել «Հնչակ»ի 1900 № 7-ի և 1901-ի
№ № 1, 2, 3-ի մէջ:

Վերարտատպում ենք Համարեա՛ թէ անփոփոխ՝
բացի մի քանի կտոր յաւելումներից, որ եղած են լոկ
պարզաբանութեան տեսակէտից :

Մեր ընդՀանուր նպատակն է եղել այս զբուածքով
պատկերացնել «ԵՐԻՑԱՍԱՐԴԻ ԹԻՒՐԲԻԱՆ» այնպէս,
ինչպէս որ նա երեւան է եկել պատմութեան ընթաց-
քում, ցոյց տալ Թիւրբիայում ու Թիւրբիալի շուրջը
յուզուող խնդիրների ընդՀանուր բնաւորութիւնը և
«Երիտասարդ Թիւրբիայ»ի դէպի այդ խնդիրները
բռնած դիրքը:

Խնդրի վրայ մենք նայել ենք քաղաքական,
ազգային տեսակէտից, որովհետև «Երիտա-
սարդ Թիւրբիայ»ը միայն այդ ուղղութեամբ են
որոշեալ Հայեցակէտեր երեւան դրել և գործոնեցու-
թիւն ցոյց տուել:

Անշուշտ մենք չենք կարող Սօցիալ-Դէմոկրա-
տական սկզբունքներով քննադատել մի Կուսակցու-
թիւն, որ արդէն այդպիսին չի եղել:

Խնդիրների լուսաբանութեան Համար մենք պիտի
ընտրէինք այն մէթոսը, որ արդէն ընտրած ենք:

Ո՞ւ

— Ա

կառոր է

թիւր

օրերը ,

շըջանը

կեանիք,

կածիչոյց

վիճմնա

Սկզ

եղող գ

կերպւոս

բող հ

նելուց

յա լ ձ

ձէջ :

Հա

որ հոս

եւ

հարեւ

զինուու

էլ ս

ներից

արեւ

առան

Ս

բակա

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ո՞վ են և ի՞նչ ցանկանում “Երիտասարդ Թուրքեր”ը : — Եյդ Հարցին փաստօրէն պատասխանելու համար Հարկաւոր է մի փոքր յետ երթալ, պատճութեան էջերը թերթել : Թիւրքիայի գոյութեան պատճութիւնը, սկզբից մինչև մեր օրերը, երեք սրոշ շրջանների կարելի է բաժանել : Առաջին շրջանի՝ որ ընդգրկում է աւելի քանի երեք Հարիւր տարուայ կեանք, Թիւրքիայի սկզբնական ծագման և աճման ժամանակամիջոցն է, որ սկսում է Էրթուրիլից և հասնում մինչև Վիեննայի յայտնի պաշարուածը (1288-1683) :

Սկզբնական այդ շրջանի մէջ՝ Օսմանի անունով յայտնի եղող փոքրիկ վաչկաստոն ծովովուրդը հետզետէ կազմակերպում, ծաւալ է ընդունում և Փոքր-Ասիայի մէջ ապրող համայնք և օտարասեռ տարրերին իր լծի տակն առնելուց և նրանց երկիրները տիրապետելուց յետոյ՝ մանում է յարձականութեան, աշխարհական, աշխարհական պիրքի մէջ :

Հայաստանը՝ այդ ժամանակ պատա՛ռ-պատա՛ռ՝ արի՛ւն էր որ հոսեցնում էր :

Երսոսական փոքրիկ պետութիւնները անկազմ, Հարեւան Հարեւանի հետ անհամերաշխ, բոլորովին անպատճառ զինուորական մի աշարկու թշնամու ընդդիմալրելու, ամէնքն էլ սարաափահար դողում էին այն աշխարհակալ բանակներից, որ անամբարտակելի հեղեղի նման հետզետէ դէպի արեւմուաք էին ընթանում և ամէն ինչ իրենց հոսանքի մէջ առած աւերում, քանոյում, առաջ էին քշում :

Եյդ շրջանի մէջ Օսմանցին աշխարհակալ ազգի զինուորական բոլոր յատկութիւնները ցոյց տուեց : Սակայն նա միայն

աշխարհակալեց, տիրապետեց, չոնեցաւ, երեսան չքերեց բարձր ազգերին յատուկ քաղաքացիական այն յատկութիւնները, ընդհանուր այն կուլտուրան, որ կարող էր նրան ճիշոց տալ կազմակերպելու՝ օրգանական մի ամբողջութեան, մի ազգութեան վերածելու նուածուող երկիրներն ու ժողովուրիները: Նա բացարձակապէս անկարող եղաւ տիրուող այլասեռ տարրերի մէջ փոխարարձ համերաշխատթեան կապեր հաստատել՝ նրանց բորբին իր հետ կապել և ցըրւած, անկերպարան ճասերի ամբողջացուցիչ, շաղկապող կեղրոնը դառնալ: Նա տիրել էր սրով, սուրբ ձեռքին էլ շարունակեց ապրել՝ “ինչպէս մի բան ակած զօր ախուժ մը”, ճուանալով սակայն որ սուրբ ամեն ինչ չէ, — և նա այդ զգաց իր պատճութեան երկրորդ շրջանի մէջ, որ այլևս շա՞տ ուշ էր:

Երբ օսմանեան աշխարհակորձան հոսանքը ամեն ինչ իր տակն առնելով՝ հասաւ Վիեննայի պարիսպներին (1683), այդտեղ բաղխեցաւ մի հաստահիմն ամբարտակի և այլևս անկարող լինելով ճեղքելու, առաջ ընթանալու, հոսանքը կանգ առաւ և յետախաղաց դիրք ընդունեց:

Անխոյելի կարծուած օսմանցու պարտութեան առաջին նշաններից խրախուսուած՝ Աւտորիան, Լեհաստանը, Վենետիկի հասարակագետութիւնը, զանազան ճանր ազգութիւններ և ասպետների խճեր այնուհետեւ, պարբերաբար, Օսմանցուն յետ մղելը իրենց առաջնորդող գաղափարը դարձրին:

Չանցաւ շատ ժամանակ՝ Թիւրքիայի թշնամիների բանակի մէջ երեւան եկաւ և՛ մի նոր երիտասարդ, աշխարհակալական ամեն բնապիներով օժտուած ազգ՝ Ռուսիան:

Թիւրքիան այժմ իր առաջ տեսնում էր ո՛չ միայն սահմանակից պետութիւնների վերակազմուած զինուորական ոյժը, այլև նրանց մէջ կայացած համերաշխական գաղափարի մի ուրուազի՞ իրեն վերջնականապէս տապալելու: Պատերազմի դաշտ ի հարկին դուրս եկող բաղմաթիւ զօրեու ազդակներին այլևս անկարող լինելով զիմազրաւելու, նա իրեն համար անհրաժեշտութիւն համարեց յարձակողական ի մէջ մտնելի բերք ի ց պաշտպանողական ի մէջ մտնել:

լու . նպատակ ընտրելով բաւականամաւ միայն իր արդէն տիրապետած երկիրները պահպանելով :

Սակայն՝ իր պատճութեան այդ երկրորդ շրջանի նոյն իսկ սկզբի օրերից՝ ո՛չ միայն Թիւրքիան անկան բացարձակ նշաններ սկսեց ցոյց տալ, ո՛չ միայն ծաւալուող հարեւան պետութիւնները կարող եղան միացած կամ առանձին առանձին իրենից ընդարձակ տարածութեամբ հողեր գրաւել, այլև նրա համար ծածուկ չմնաց և՝ այն հանդամանքը, որ իր բոլոր հին ու նոր թշնամինները իրեն գոյութիւնը փոխարինող նոր բաղկացութիւնների մասին էին խորհում : Այդ դեռ հերթիք չէր : Իր բաղկացուցիչ, մեռած կարծուած ազգութիւնները հանդէս էին բերել ո՛չ միայն կինսառնակութեան հաստատուն պայմաններ, ո՛չ միայն հրապարակացն զգուհութիւններ էին արտայայտում դէպի ինքը, այլև իր ենց սեպ հական ան կառ ու թե ան ը ձգտու մեր կամաց աչպահութիւնները դարձը :

Պարզ էր, որ այդ պայմանների տակ, թողած իր սեպհական ոյժերին, Թիւրքիան անկարող պիտի լինէր ընդդմապելու թէ՛ իր ներքին և թէ՛, ճանաւանդ, արտաքին քայլայիլ յարածուն ազգակիններին : Նրա անկումը անսկ սկսուած էր նկատուած անձէնքի կողմէ ից : Բայց ինդիրն այն էր՝ թէ՛ ո՞վ, որո՞նք պիտի լինէին նրա ընդդմապել երկիրները ժառանգունները, նրա թողած բաց տեղը բռնողները : Եւ անկարող լինելով հաւաքականօրէն այդ հարցը արմատապէս լուծելու, պետութիւնները ստիպուեցան զանազան ուղեգծեր, կիսամիջոցներ ընդունելու :

Ա. — Նախապէս ընդհանուր համերաշխութեան գալ իրարու հետ, միան ալ և ապա բաժան ան ել :

Բ. — Պահպան երբ ընդհանուր համաձայնութեան չէր կարելի յանդիլ :

Գ. — Օգնել, միջոց տալ նոր զարթնող, Թիւրքիայի բաղկացուցիչ մասները կազմող ազգութիւններին, որ իրենց բուն հայրենի երկիրը յետ ստանան :

Ահա քաղաքական այն ընթացքը, որ զծեցին պետութիւնները Օսմանցու նկատմածք, նրա գոյութեան երրորդ շրջ-

ջանի մէջ, որ սկսում է 1815-ից մինչև մեր օրերը։
Եթէ ընդհանուր առմանք բոլոր պետութիւնները Թիւր-
քիայի գոյութիւնը եւրոպական հաւասարակշռութեան համար
առ ժամանակ եւ այս անհաջող անհաջող է շար ի ք էին
համարում, մինչեւ նրա բաժանման համար ընդհանուր հա-
մաձայնութեան կայանալը, սակայն կային էլ պետութիւններ,
որոնք իրենց մասուն շահի տեսակէտից ցանկանում էին
տեսնել մի Թիւրքիա՝ բարեկարգուած, զօրեղ և իր ուրոցն
ներքին ոյժերով ապրելու կարող։ Այս վերջին ճտածմունքը,
մասնաւրապէս, ցոյց տուին Թրամախան և Անդլիան։ Ահա
թէ ի՞նչու այդ երկու պետութեանց ներկայացուցիչները,
զանազան ժամանակներում, սրտանց աշխատեցին ամէն կարգի
Ճնշում ի գործ զնել թրբական պատասխանառու պաշտօն-
եաների և կառավարիչների վրայ՝ երկրի մէջ քաղաքական և
ընկերային անհրաժեշտ բարենորոգումներ ներմուծելու՝ Թիւր-
քիան եւրոպականացնելու։

II

,,ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՃԱԳՈՒՄԸ

Թիւրքիայի գոյութեան ներքին և արտաքին պայմանները,
պետութեանց բանած քաղաքական ընթացքը չէին կարող,
հարկաւ, չաղղել և՛ բոն թուրքերի վրան։ Եւ արդարեւ,
որքան որ խալամութիւնը մարմնացնով աղղակները դարերի
ընթացքում ջանացին ամէն կարգի արգելքներ հանել և թոյլ
չոսալ որ եւրոպական ճտքի արտայացութիւնները ճուռք և
ծաւալ գտնեն Խալիֆայութեան երկրների մէջ, որքան որ
օսմանցի ժողովրդի բիրս մնութապաշտութիւնը, մոլեռանդա-
կան բնազդը աշխատեց իրեն հետո պահել եւրոպականու-
թիւնից — այնուամենայիւ թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքա-
կան ներկայացուցիչ, իրենց բոլոր նեցուկներով՝ անզօր եղան
պատմէշել լուսաւորութեան յառաջընթաց հոսանքը, անան-
ցանեի պատուար քաշել քաղաքակրթութեան ծաւալման առաջ;
Թուրքը՝ որ մինչեւ այդ ժամանակ եղած էր միայն ն ի ւ թ ա-
կան կ ո պ ի տ ո յ ժ ժ, զուրկ ստեղծական կարողութիւնից,

որ իր մտածմունքը, ներշնչումների ձեւերը, գոյնը, յաճախ առարկան իսկ, Պարսկից և Արաբից էր փոխ առած — այլևս անկարող լինելով հին ուղղութեան մէջ շրջանակուելու, անհրաժեշտութիւն նկատեց զլոխ ծուել պատմութեան հանդէս բերած նոր պայմանների առաջ և երեւան եկած նորանոր պէտքերին բաւականութիւն տալու համար՝ աչքերը ուղղեց դէպի արեւմուտք՝ Եւրոպա։ Իսկ իրերի ծնեցրած այդ դիտումի ընդհանուր հետեւանքներից մէկն էլ այն եղաւ, որ յառաջ եկան զրոյների, մտածոյների նոր շարքեր, նոր խմբեր, որոնք մի կողմ ձգելով անպէտք դարձած հինը, աշխատեցին ձանաչել իրենց երկիրը և ուսումնասիրել Եւրոպան ու նրա հասարակական-քաղաքական հաստատութիւնները։ Օսմաննեան այդ նորածին, թարմ ոյժը՝ իր ձգտումներին յագուրդ տալու համար՝ զինեց Եւրոպական նորքն, զիստորապէս ֆրանսիական գրականութեան, և նորեկին յատուկ եռանուով ամէն ինչ սկսեց չափել, ձեւել այս վերջնիս վրան։ Պարսկականի և արաբականի տեղ այժմ բռնեց ֆրանսիական լեզուն, ֆրանսիական գրականութիւնը։

Քայց ֆրանսիական ճոխ լեզուն, հոյակապ պատմութիւնը, հարուստ զրականուութիւնը իրենցմով հետաքրքրուողներին միայն զբացմունքի ձեւեր արտայայտելու միջոց չպիտի ընծայէին, այլ և՛ մտածմունքի, խորհելու առաստ նիւթեր։ Այն ազգը՝ որ մի քանի յեղափոխութեանց երկար, զժուարին բովիցն էր անցել և համայն աշխարհի սրանչացումը զրաւել, — արտազրել էր քաղաքագիտական զրոյների, մտածոյների այնպիսի հսկայ շարքեր, որոնք անկարող էին իրենց զրոյշը չզնել, այս և այն չափով, իրենց ընթերցողների վրան։ Եթէ եղան թուրք երիտասարդներ, որոնք նպատակ զրեցին իրենց հայրենիքը փոխադրել ֆրանսիական գրականութեան գեղարուեստական կողմը, սակայն եղան շատերն էլ, որոնք աշխատեցին օրինակել, հետեւել ֆրանսիական քաղաքագիտական մտաենագիրների ասանձներին և ցանկացան նրանց մտածմունքի արդիւնքները, ինչպէս որ իրենք էին հասկացել, իրենց երկրի մէջ ծաւալել։

Քաղաքագիտական ուղղութեածք զրելու տեսակէտից թուրքերը առաջ են հայերից։ Տամնիններորդ դարու 30-ական

թուականը թուրք գրականութեան մէջ առաջ էր բերել քաղաքագիտական գրողների մի որոշ խուճք, որոնց ընդհանուր ծիսումների ամփոփով և արտայայտիչը եղաւ Ռէշլու: Իսկ հայերը դեռ երկար տարիներ պիտի սպասէին, մինչեւ որ ասպարէզ մանէր Միքայէլ Նալբանդեանը, — հայ քաղաքագիտական առաջին գրովը:

Ի՞ նէ պատկեր էր ներկայացնում Թիւրքիան երիտասարդ գրչի տէր քաղաքական այն բարենորոգիչներին, որոնք՝ ինչպէս իրենք էին ասում՝ մնուած Արեւմտեան Եւրոպայի յառաջադէմ գաղափարներովը, վրանին առան “ Երիտասարդ ու արդ Թուրք եր” անունը և իրենց հրապարակային, հասարակական գործունեութեան նպատակ ընտրեցին վերածնութեան մէջ զնել իրենց երկիրը և զին, մզուած, խարիսխած Թիւրքիայից վերաշնիւր, առաջ բերել մի նոր “ Երիտասարդ ու արդ Թուրք իւր քիւր ” :

Աշա այդ պատկերը.

Մի երկիր՝ բաղկացած բազմատարր ցեղերից ու ազգութիւններից, որոնցից ամէն մէկը ունէր իր ազգային անհատական առանձին կեանքը, իր գոյութիւնը պահպանելու հաստատում հիմունքները: Զերք այդ տարրերի մէջ փոխադարձ համերաշխութեան և ո՛չ մի կապ. ո՛չ մի անցեալ, հասարակական և ո՛չ մի հաստատութիւն կար՝ որ այդ օտարաշենները իրարու հետ շաղկապելուց յետոյ, ամուր կերպով նրանց կապէր տիրուղ տարրի, 0 ս մ ան ցի ի համար, և այդպիսով բոլորից կազմէր մի ամբողջութիւն: օրգանական մի մարմին, մի ազգութիւն:

Պետական կազմակերպութեան տեսակէտից նրանք տեսնում էին՝ որ Թիւրքիան ներկայացնում էր մի անկազմ, անկերպարան երկիր, կեղեցումների որս, յափշտակութեան վայր՝ բոլոր պաշտօնական ու անպաշտօն կառավարիչ-հարաբերիչների համար, “ երկիր՝ ուր աղաւնին իսկ գողանում էր ” : Մի կառավարութիւն՝ որի “ զուխը ”, “ ուղեղը ” Պօլս նստած, անձնաստուր էր եղած ցոփակեաց կեանքի ամէն նրբութիւններին, անհոգ, անընդունակ՝ պետական նաւը ժամանակի հոսանքի հետ առաջ վարելու . որ երկրի գոյութեան, պահպանութեան միակ գրաւականը նա այլուս չէր

սպասում իր սրից, ինչպէս առաջ, այլ իր ժառանգործները լինելուն աչք զնող պետութեանց փոխադարձ նախանձից, մըցումից և հակառակութիւններից : Իսկ այդ բոլոր թուլութիւններից օգտուերավ նուաճուող ազգերից ոմանք արդէն յաջողել էին իրենց ազատութիւնը ձեռք բերել, ոմանք էլ ապստամբութեան զրօշը պարզելու շաւղին մէջ մտել և իրենց մօտալուտ անկախութիւնը երազում, ու պատմութեան ընթացքը որոշակի ցոյց էր տալիս որ մի օր նոյն ուղին պիտի ընդունէին և՛ միւս ազգութիւնները, եթէ իրերի արդէն եղած զրութիւնը նոյնութեամբ շարունակուէր, այնպէս որ մի օր Օսմանցին պիտի զարժնէր և իրեն տեսնէր հալուած, բոլորովին կազմականուած, քաղաքական կեանիկց վայր իջած : — Աշա այն պատկերը՝ որ տալիս էր նրանց իրականութիւնը, Հեռանկարը՝ որ պարզում էր պատմութեան ընթացքը :

Ի՞նչ էր և ի՞նչ եղած այդ բոլորի հանդէպ կառավարիչ այն խմբի ցանկութիւնները, որոնց ամուշեան իրենք սկսեցին ամսուանել “Ծե բունի թուրքեր” : Ի՞նչ ընդհանուր ծրագիր, ի՞նչ մեթօդ, քաղաքական ի՞նչ ուղեղիծ էին նրանք ընդունել դէպի այլակրօն, այլացել տարրերը և ի՞նչ հիմունքների վրայ զիել պետութեան կազմը :

— Ոչ-մահմէտականներին ու այն եաց գարձնելով նրանց բոլորովին կղզիացրել էին և պետութեան մէջ առաջ բերել կողք կողքի ապրող՝ իրարու խորթ, օտար, թշնամի մարմիններ : Ռայ այն եան երը քաղաքական կեանքից բոլորովին արտաքսուած լինելով սկզբունքով ո՛չ բանակի մէջը կարող էին ընդունուել և ո՛չ էլ հաստրակական, պետական պաշտօններ ստանալ, բայցի քմահաճոյցի թելաղրութիւննից : Պետութիւնը ամէն իրաւունք ունէր դէպի այդ տարրեր անցեալ, տարրեր կրօնք ու սովորութիւններ ունեցող ցեղերը, առանց սակայն ունէ պարտականութիւն ստանձնելու : Քաղաքական անհաւասարութեան ստեղծելով էր, որ “Ծերունիներ”ը մտածել էին ընկերային անհաւասարութիւնը մշտնչենաւորել, և այդ մէթօդով՝ տիրուող ոչ-մահմէտականներին շարունակ արտադրութեան խօսուն գործիք գարձնելով նրանց յարատե հպատակութեան, հնազանդութեան մէջ պահել :

Իսկ օսմանեան գահակաները այդ ճի և նոյն հպատակ ժողովուրդների հետ իրենց յարաբերութիւնները դիւրացնելու համար՝ յարմար ճիջոց էին համարած իւրաքանչիւր դաւանութեան պատկանող քրիստոնեաններից կրօնական առանձին համայնքներ կազմելու, և նրանց կրօնական պետին իր հօտի հաւատարմական զգացմունքներին պատասխանատու ճանաչելու :

Արդ, որքան որ " Ծերունի Թուրքեր " ի կամ ճինչեւ այդ ժամանակ երկրի կարգ ու կամոնը տուող պահ պահ անող կամքի ձեռք առած ճիջոցները կարող լինեն անզօրութեան, Հնազանդութեան ու կրաւորական դիրքի ճէջ զնելու զանազան հակաշահ և հակամարտ ճգտութեր ունեցող տարրերին — այնուամենայնիւ նրանք անկարող էին արմատափիլ անել, ճոռացնել տալ այդ ժողովրդներին իրենց անհաւականութիւնը կազմող տարրերը և նրանց բոլորը ի ճի ձուկելուց յետոյ՝ ճի ճողովուր ը, ճի ճար ճի ճաւացընելու : Ինչքան որ հպատակ ազգերը սահմանափակ շրջանի ճէջ էին զրուած, զարձեալ՝ " Ծերունի Թուրքեր " ի շնորհած ճիջոցներով հպատակ իւրաքանչիւր համայնք կարողանում էր վառ պահել իր անցեալի յլշատակները, ճշակել, ընդարձակել իր գոյութեան հիմունքները և իր առանձին իդէալը ունենալ, — իդէալ որ բնաւ համապատասխան չէր օսմանեան պետական շահերին : Մի խորպով օսմանեան կայսրութեան ունեցած քաղաքական կազմակերպութիւնը իր անկումը անխուսափել պիտի դարձնէր, եթէ չաշխատուէր այդ երկիրը նոր հիմունքների, նոր խարիսխների վրայ զնելու :

Եւ վերակենդանացնելու այդ պատմական ծանր պաշտօնը իրենց վրայ առնել ուղեցին Ռէշիդը ու իր գաղափարակեց ընկերները, որոնք իրենց վերակազմելիք նոր Թիւրքիան՝ Հինից տարբերելու համար՝ անուանեցին " Երիտասարդութիւն " :

III

“ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՅ, Ի ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐՆ
ՈՒ ՃՐԱԳԻՐԸ”

Ի՞նչ էին “Երիտասարդ Թուրքը եր ՚ի ղեկավարիչ սկզբունքները :

Թիւրքիան վերակաղմել, վերաշաստատել այնպիսի հիմունքներուն, որ նրա մէջ ապրող զանազան այլացեղ, այլակրօն տարրերը, ժամանակի ընթացքում, յառաջացնէին, կազմէին մի գանգուած, մի մարմին, մի ժողովուրդ, մի ազգութիւն մասնաւոր թշնամի ցեղեր, այլ մին միւսի շարունակութիւն կազմող մասեր, որոնց բոլորին մէջ պիտի տեղակալ է կղզիացած, իրարու խորթ ու թշնամի ցեղեր, այլ մին միւսի շարունակութիւն մասնաւոր թշնամի ցեղերը, արմատախիլ անել, ջնջել նրանց ինքնուրոյնութիւն տուող պայմանները, արտօնութիւնները և այդ բոլորից՝ առանց խորութեան՝ կազմել մի ամբողջ ողութիւն, որ ունենար նոյն ձառնութիւն ունեցող վիշերը, խորութիւնները վերացնել, արմատախիլ անել, ջնջել նրանց ինքնուրոյնութիւն տուող պայմանները, արտօնութիւնները և այդ բոլորից՝ առանց խորութեան՝ կազմել մի ամբողջ ողութիւն, որ ունենար նոյն ձառնութիւն ունեցող վիշերը, խորութիւնները, նոյն իդէալը : Արիշ խօսքով մինչեւ այն ժամանակ գոյութիւն ունեցող զանազան համայնքների տեղ պիտի ափերէր մի համար յանք, մի ազգութիւն 0 ս մ ա ն ե ա ն : Եւ այդ բոլորի համար հարկաւոր էին միայն փոխաղարձ բարի արածաղբութիւններ, համաձայնութեան մի քանի արտաքին նշաններ, սկզբնական մի քանի թեթև փոփոխաւթիւններ, որպէսզի գոյութիւն ունեցող ամէն ինչ համար համար համար 0 ս մ ա ն յ ի լինելու շաւզին մէջը մանէր : Արևածագութեան լուսաւոր եալ մաքերով տոպորուած ”Երիտասարդներ” իրենց այդ ասածների հաստատութեանը կենդանի օրինակ էին բերում, զիսաւորապէս, Ֆրանսիան և Պրուսիան :

Մի Ֆրանսիա, Փրանսիական մի ազգութիւն կազմող ժողովուրդը դեռ շատ ժամանակ չէ, որ բաժանուած էր տար-

բեր միտթիւնների , տարբեր ցեղերի , որոնցից խրաքանչխրը ուներ իր սեպհական լեզուն , ուրոյն անցեալը , տարբերող սովորութիւնները , նիստ ու կացը , ուր հիւսիսում ապրողը նոյնքան խորթ ու հակածարտ ձգտումներ ուներ դէպի հարաւայնը , որքան և արեւելքինը դէպի արևմուտքը : Սակայն այդ բոլորը ի մի ձուլուցան կեղրոնական նշանը ֆրանսից (lle de France) ձեռք առնուած կառավարական միջոցների , համբական օրէնքների ու հաստատութիւնների շնորհիւ , և այդպիսով այլազան ցեղերից կազմուեցաւ մի ժողովուր մի ազգ՝ տոգորուած համան ման զագուր ման զագուր ման երով , համան ման շահ երով :

Պրուսական պետութիւնն կար , բայց ո՛չ ազգութիւն : Բայց այսօրուան պրուսական ժողովուրդը՝ տարբեր տարբերից՝ զանգեց , թիեց , յառաջ բերեց պետութիւնն ընթը՝ իր տուած կազմակերպութեան շնորհիւ :

Արդ , ինչու միեւնոյն ընթացքը ընդունել և՛ Թիւրքիայի նկատմամբ : Քանի որ մի ճանօթ սկզբունք բարերար արդիւնք էր ունեցել մի երկրում , նոյն բարերար հետեւանքը կարող էր ունենալ և՛ մի ուրիշ երկրում , հարկաւոր էր միայն փոխ առնել , հետեւել մտածում էին հետեւ ողական ու թե ամ բ առաջնորդուուլ ” Երիտասարդներ ” ը :

Աշա այն գաղափարները , որ իրենց բարենորդուքչական գործունեութեան առաջնորդ ընդունեցին թուրք ” Երիտասարդներ ” ը և աշխատեցին ո՛չ միայն այլ մտքերը իրենց քաղաքագիտական գրուածների մէջ արտայայտել , այլ չամացին համախուցների մի շրջան ստեղծել , որ իր ձեռքը առներ պետական գործերը և տեսական այլ գաղափարներին ողի ու մարձին տար : Իխայոյս լինելով , այսպէս , որ կարծ ժամանակամիջոցի մէջ իրենց առաջարկած միջոցները ո՛չ միայն յեստ պիտի կասեցնէին օմանեան պետութեան անկումը , այլև նրա հին երակների մէջ նոր արիւն հոսեցնելով կարող պիտի լինէին հիմնապէս ամրապնդել և մի շոծ , ընդարձակածաւալ , ներդաշնակ մասունքներով շաղկապուած 0 ս մ ա ն ե ա ն ա լ գ յառաջ բերել , որի մէջ այլև գոյութիւն չպիտի ունենային ներքին , ցեղական թշնամութիւններ , հակածարտ ձգտումներ , այլ ամէնքը գո՞յ

ծիաձոյլ զանգուածի , անդեկի ապառաժի նման օտար թըշ-նամիների առաջը պիտի արձանանային :

Եւ իրենց վերաճնութեան այս թոփչի մէջ՝ " Երիտասարդներ " ը այնքան առաջ էին գնում , որ բարորովին արդարացուցիչ և շահեկան էին համարում , ի հարկին , օտար համար ամար էր ի ամք ողջ ական բռնի կրօն ական կոտոր ածն երը : Այդ բոլորը նրանք մեղացուցիչ անհրաժեշտութիւնների էին համարում ապագայի , սկզբունքի տեսակէտից :

Թրանսիական պետական անձնաւորութիւնները Ռէշիվին համարում էին օսմաննեան Ռիշլէօ . խոկ անգլիացիները առանձնապէս ուրախ էին որ շուտապվ " Երիտասարդներ " ը ոտից ցվում կերակենուանացնեն օսմաննեան պետութիւնը և այդպիսով ծիանգամից վերջ կը գնէին Արեւելեան Խնդրից , բայց և վոտանգաւոր մղձաւանջին :

Օժտուած բանաստեղծական ձիբրով , ինչպէս և քաղաքավական առանձին յատկութիւններով , մի քանի անգամ փոխն ի փոխ գեսապահական պաշտօններ վարած Պարիզում , Լօնդոնում , Քեօթահիայի և Ազրիանապօլի յայտնի բանակցութեանց մասնակցած , քանից արտաքին գործների նախարարի պաշտօն ստանձնած ու եւրոպական նշանաւոր պետական անձերի բացայացած շնորհը վայելած , Ռէշիվը (փաշ) իր գաղափարների տարերքին մարմին տուեց Գիւլհան է ի հատակի Շէր ի ֆով : Արդիւկ Մէշիվի օրոք հաստատուած քաղաքական այդ գործողութիւնը ո՛չ ծիայն առաջ եկաւ Ռէշիվը և իր համալսարշների աշխատութեանք և թելաղորութեանք , այլ այդ " թրքական Magna Charta "-ի խմբագրովը ինը՝ Ռէշիվը եղաւ : Դրանով թիւրքիան մի համատարը ամբողջութիւն նկատուելով ամէն տեղ ստեղծուած էին համատիպ " համար հան ական ու նահանգական խորհուրդներ ", " արդարադար աղաջառ առաջ թեան կազմական բարդ ակերպութիւն " ամէնքի համար՝ առանց խտրութեան , " ընդհանուր ապահովութիւն " օսմաննեան ամէն հպատակների համար , և " կանոնական առոր հարկ ատառութեան ընդհանուր սիստէ ծագութեան բոլոր մասերի մէջ :

Աշա բարենորոգչական այն զվարուր գծերը, որ չափին, ձևեցին “Երիտասարդներ”ը՝ վերակենդանացնելու, երոպականացնելու համար ա ճ բ ո ղ ջ թ ի ւ ր ք ի ա ն :

Այդ քայլը թէ՛ յանդուզն և թէ աննպատակայարձար նկատուեց “Մ ե ր ո ւ ն ի ն ե ր ”ի կողմից:

Բայց որքան որ երոպական զաղափարներով ասպարէզ իջած բարենորոգիչների փայփայած մտածմունքները առաջին անգամին խակ իրականութեան ժայռին բաղնելով՝ անպողուղ մնացին, այնուամենայնիւ հետեւղների շարքերը անպակաս չ ե ղ ա ն:

✓ Ֆուադ, Ալի, Զէմալ շարունակեցին իրենց ուսուցչի և ընկերակցի գծած ուղղութեամբը ընթանալ և իրենց “Լ ու ս ա ւ ո ր” զաղափարները ամփոփեցին, մի քիչ աւելի ընդարձակ ձևով, Հատտի Հիւմայինի մէջ (18 վետր. 1856) ու զրեցին Պարիզի դաշնագիրն կնքող պետութեանց ներկայացուցիչների առաջ:

Այս անգամ “Երիտասարդ Թիւրքիան” յայտարարում էր ո՛չ միայն ընդհանուր ապահովութեան, այլև ընդհանուր ազատութեան և օրինական հաւասարութեան սկզբունք՝ օսմանեան բոլոր հպատակների համար, առանց ցեղի ու կրօնի խորութեան: Միւսլիմանների և քրիստոնեանների մէջ եղած տարբերութիւնները ջնջում էին ու քրիստոնեանները ընդունում՝ զինուրական բոլոր աստիճանների, քաղաքացիական բոլոր պաշտօնների մէջ:

✓ Այսպիսով “Երիտասարդներ”ը մի նոր գրութեամբ անհետացնում էին օսմանեան երկրի մէջ եղած ցեղերի դարաւոր թշնամութիւնների պատճառը, ջնջում էին ներքին երկպառակութիւնները, վերացնում կրօնական խորութիւնից առաջացած անհաւասարութիւնները և մէջտեղը զնում 0 ս մ ա ն ե ա ն ն ե ր դ ա շ ն ա կ ա ճ բ ո ղ ջ ո ւ թ ի ւ ն ը: Այլև պետութիւնը արձատապէս բուժուած, վերակաղնուած էր, կարծում էին, հարկաւոր էր միայն մի քիչ սպասել՝ արդիւնքը վայելելու համար:

Ծնունդ իրենց ժամանակի տիրող զաղափարների, “Երիտասարդ Թուրքեր”ի յղացած մտածմունքները՝ օտար պետութիւնների թշնամանքների, հպատակ ազգերի անտար-

բերութեան և “Ներունի Թուրքեր”ի Հակառակութիւնների միջից անցնելով՝ առանց մի փոքր չափով պակասեցնելու գոյութիւն ունեցող ներըին և արտաքին բարդութիւնները— եկան հասան Միդհատին:

Մայրագոյն աստիճանի փառասէր՝ բայց հանձարեղ, ազատամտութեան ջրեղով վիտակից մոլուանդ, քրիստոնեայ աղքերին և նրանց քաղաքակրթութիւնը ի սրտէ արհամարհող, բայց նրանց վիճուրական մեծութեան առաջ կքուով— Միդհատը իր նախորդների յացումները առաջնորդ ընդունելով՝ նախ աշխատեց տեսնել, ճանաչել օսմաննեան գահի շուրջը բոյորուող աղքութիւններին. ուստի այդ նպատակով երկար ժամանակ մնաց Բուլղարիա, Ռումանիա և ապա անցաւ Եւրոպա, պաշտօնապէս ուսումնասիրելու, Հետազոտելու համար Եւրոպական աղքերի քաղաքական հաստատութիւնները, իր ուսումնասիրութեան արդիւնքից Թիւրքիային բաժին հանելու դիտումով:

Գերճանական Ռայխստագի նիստերից մէկում, 1875, պատգամաւորներից մին հարց ուղեց Բիսմարկին, նրա կարծիքն իմանալու համար Եւրոպայի քաղաքական դրութեան մասին:

“Եւրոպական երկնքի վրայ ո՛չ մի ամպ չեմ նշնչարում, բայց Հերցեգովինայի փոքրիկ ու կէտից”, — պատասխանեց երկարի ու կրակի ամենակարսող զօրութեանը պաշտօն մատուցանող Երկաթի Կանցլերը:

Այս անկարող լինելով տանելու թրբական մահացուցիչ վարչականութիւնը, Հերցեգովինայի մի բուռն ժողովուրդը զիմել էր զէնքի փրկարար զօրութեանը և պարզել ապստամբական գրօշը: Իր հորիզոնի վրայ բարձրացած “փոքրիկ ու կէտը” փոթորկաբեր մի մեծ ամպ, ընդհարումների, արիւնհեղութիւնների աղբիւր դառնալու վրայ էր:

Բուլղարիան պատրաստում էր իր կեանքը կամ մահը ապստամբական սրից խնդրելու:

Սերբիան, Մօնթէնէգրօն իրենց ցեղակիցների տանջանքների առաջ պատերազմական ընդհանուր թրթուումի մէջ էին մտել: Խակ Ռուսիայում համապատութեան աղքեցիկ կարապետները ամբողջ Երկիրը “սրբազն ովկուրութեան” մէջ դր-

բած՝ առաջին ձայնին էին սպասում “տանջուող եղբայրներ” ին օդնութեան թուշելու:

Յապաղելու ժամանակ այլևս չկար: Ինքն իրան Օսմանեան Բիսմարկ Համարող Միդհատը աճապարեց իր Հռոշակաւոր “յիշատակագործ” ը ուղղելու Բիսմարկին, նըրան կրինելով, փաստելով այն բոլոր բարիքները, որ կարող պիտի լինէին տալու՝ առանց ցեղի ու կրօնի խտրութեան ծրագրած բարենորոգումները, եթի նրանց ընդհանուր նապատակը լինէր առաջացնել ա մ բ ո դ շ ա կ ա ն, մ ի ա ձ ո յ լ, մ ի և ն ո յ ն հ ա ս տ ա տ ո ւ թ ի ւ ն ն ե ր ո վ օ ժ տ ո ւ ա ծ մ ի թ ի ւ ր բ ի ա :

IV

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԹԻՒՐՔԻԱ

✓ Հերցեգովինան, Աերբիան, Բուլղարիան, 1876-ի աշնանը, արեան մէջ էին լողում: Մեծ Պետութեանց ներկայացրած առանձնակի և Հաւաքական ծանուցազրերն ու ազգարարութիւնները ամփետանք էին մնացել Բ. Դրան կողմից: Դեկտեմբերի 23-ին Կ. Պօլսում կայացաւ դեսպանաժողով (conférence), իրեն առարկայ ունենալով արեան թատր զարձած երկրներին բաւարարութիւն տալու, մշակելու բարենորոգումների մի ծրագիր և այդ ծրագիրը գրուազրելու երաշխաւորութիւններ ապահովցնելու Բ. Դրան կողմից: Դեռ հաղիւ առաջին նիստը սկսած, յանկարծ թնդանոթների որոտալից բոմբինը պետութեանց լիազօրներին յայտարարեց, որ այլևս իրենց աշխատանքին հարկ չկար, զի Թիւրքիան արդէն ունէր Սահմանադրութիւն, Պարլամենտ, որ կարող էր 0 ս մ ա ն ե ա ն Ա զ գ ի և կայսրութեան երկրների մէջ ծագած բոլոր դժուարութիւններին պար լա մ ե ն ա օ ր է ն վերջ տալ: Եւրոպական պետութեանց քաղաքական բարձրագոյն ու ամենակարեւոր հաստատութիւններից մին ա ր դ է ն վայելում էին ծոճանցված էին “Ե ր ի տ ա ս ա ր դ” ղեկավարիչները:

✓ Հշխան Գօրչակովը ծիծաղեց “Պ ա ր լ ա մ ե ն տ ա -

կան թիւը իւ այի “ անունը լսելիս : Ախազօ՞նները շարունակեցին իրենց ծրագիրը ճշակել : Միդհատը շտապեց Պարլամենտի անդամները նիստի դումարել և նստաշրջանը բաց անել : Երբ Դեսպանաժողովը իւր խորհրդակցութեանց արդիւնքը , ծրագրած որոշումները Բ. Դրան ներկայացրեց , Միդհատը պատասխանեց որ Թիւրքիան չէ կարող ընդունել օտար պետութեանց միջամտութիւնը իր ներքին դրծերի մէջ , որ Ազգային ժողովը Պար լա մէն տը իրենց միաձայն քուեով մերժել էին դրսից եկած որ և է առաջարկ ընդունելու :

Արդ , ի՞նչ էր այդ նոր Սահմանադրութիւնը Պար լա մէն տը , որի թէ՛ միւսլիման և թէ՛ քրիստոնեայ Հաւատարիմ Հպատակ բոլոր անդամները մի աձայն քուեով աւելի նախապատիւ Համարեցին ” իրեն արեան մէջ խեղիւ ասպատամք Բուլղարիան և Նրան օգնութեան եկող Համայնշ պետութիւնները , քան տեղի տալ ” :

Նորից նախկին մաքերը , Թիւրքի և իւր յաջորդների տաճած գաղափարները , թէև այս անդամ աւելի լայն , աւելի որոշ կերպարանիք առած :

” Եթէ Թիւրքիան մի բոնաւորի փոխարէն ունենար մի իմաստուն միասկետ , որ յենուէր բոլոր ցեղերի ու կրօնների ներկայացուցիչներից բաղկացած Պատգամաւորական ժողովի վրայ , ապա նա կիրկուէր ” : Թուրք Հայունասերների արտայայտած այդ ցանկութիւններն էին (1876 , մարտ) , որ արձագանք գտան և , իրենց բոլոր նախակարապետների յղացումների հետ միասին , մարծին առան Սահմանադրութեան մէջ (1876 , գեկ) , որի էական մասն է՝ Պատասխանատու նախարարական Խորհուրդ , Ընդհանուր ժողով՝ բաղկացած երկու Խորհրդարանից (Chambres) , — Երակոյտ (Sénat) և Պատգամաւորական ժողով (Chambre des Députés) : Ազատութիւն մածովի և հաւաքումների ”օրինական սահմանների մէջ , անփոխիսելի դատաւորներ , նախնական կրթութիւնը պարտաւորեցուցիչ , Խալամը պաշտօնական կրօն , և այլն :

Կազմուած Խլէմանների և պաշտօննեանների մի մասնաժողովից , Սահմանադրութեան Հեղինակները , ” Երիտասարդ

Թիւրբիան”, այդ միշտով օսմանեան պետութիւնը “բացարձակ բունապետութիւնից Սահմանադրական ճիապետութեան էին վերածում, երկրի կառավարութիւնը Սուլթանի կամայականութիւնից աղատելով” Օսման էան Ազգի ձեռքն էին յանձնում և, որ զիսաւորն է, ջնջում էր Օսման էան Ազգի ծիջից ներբին երկարաւակութեան, ցեղային, կրօնական թշնամութեան ամէն աղբիւր և օտար արտաքին պետութեանց ծիջամտութիւնը, Ազգային ն էրքի ն գործերի մէջ, բոլորովին աւելորդ և անկար ելի դարձնում ”:

Եւրոպական պետութեանց հաղորդագրելիս, Միութատը ամենայն խնամքով յանձնարարեց, որ պետական այդ նոր Հաստատութիւնը աստուածակետական և ո՛չ ծի բնաւորութիւն ունէր, զի “նա հիմնում էր կայսրութեան մէջ աղատութեան, արդարութեան, հաւասարութեան թագաւորութիւնը և քաղաքակրթութեան յաղթանակը”, և ճանաւանդ, որ “Սահմանադրութիւնը ծի խոստում չէր, այլ ծի իրական և բայցայս գործողութիւն, որ բոլոր Օսման ցին եր պար աւելորդ աւ պար էն” :

Թէ “Սահմանադրութիւնը ծի խոստում չէր” և “արդէն բոլոր Օսման ցին եր ի սեպհականութիւնն էր դարձել”— զրաքայարձակ ժխտումը ցոյց տուին յետադրյում կատարուած զէպքերը և այդ բոլորը ծիածամանակ յայտարար նշան եղան նաև այն իրողութեան թէ հրէական ծագում ունեցող Միութատը և իր նախորդները ո՛ր աստիճան կորավամտութիւն էին ունեցել ճանաչելու, հետագաելու իրենց երկիրը և լրջօրէն ուսումնասիրելու եւրոպական աղքերի պետական հաստատութիւնները ու նրանց պատմութիւնը :

V

“ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՖԻՑ, Ն ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

“Պարլամէնտ” ի լուծուելուց, Միութատի և իր խճբակի անկումից յետոյ (փետր. 1877)՝ իրենց երկրի մէջ գործելու պայմաններ այլևս չգտնելով “Երիտասարդ Թիւրքիայ” ի տաճած սկզբունքներին հաւասարիմ մնացողներից աւելի գործնները ապաստանեցին եւրոպա. և այստեղ աւելի ու նուազ

Հետևողական ընթացք բռնելով՝ չանացին իրենց նախորդների գործը շարումնակել, պայքարելով նո՞յն գծերով, նո՞յն ուղղութեամբ, դաւանելով, աւելի կամ նուազ գիտակցօրէն, նո՞յն գաղափարները և նո՞յն մտքերը :

Մինչև Եւրոպս ապաստանելլ՝ “Երիտասարդ Թիւրքիա”ն գործում էր երկրի մէջ, որին ական հողի վրա կան գործում էր, որի գործում էր նախատակ գարձնելով ձեռք առնելու երկրի օրէնսդրական և վարչական իշխանութիւնները, ինչպէս և կրօնական ու այլ “բարձրաստիճան” պետական անձնաւուրութիւնները և այդպիսով իրականացնել իր փայփայած սկզբունքները : Եւրոպա ապաստանելով՝ “Երիտասարդ”ները այլևս կրցրին օրինական հողը և միակ միջոցը՝ որ իրենց մնում էր, դա ապօրին ական հողը — յեղափոխականութիւնն էր, զի իրերի բնական ընթացքը իրենց այդ գործութեան մէջն էր զրել: Սակայն Եւրոպայի ասպնջականութիւնը վայելող “Երիտասարդներ”ը, շեղելով ստեղծուած նոր պայմանների՝ իրենց համար բացարձակ անհրաժեշտութիւն դարձրած միակ ուղեղծից, այն է յեղափոխական միջոց ի ցուց ի ց և գործ ծուն է ութիւն ից՝ նրանք ընկան անորոշ, տարտած մի վիճակի մէջ և անկարող եղան որ և է դրական արդինք ձեռք բերել՝ իրենց ճշած թղթաջան և առաջարկութիւն գոյցերովը :

Ի՞նչ եղաւ նրանց գիրքը և գործունեութիւնը, իր ամբողջութեան մէջ՝ արտասահմանում :

Ի հարկէ մենք այստեղ աչքի առւաջ չունինք “Երիտասարդ” ասուած այն դասակիքներին, որոնք արտասահման գուրս գալով, շանտած ծիստի գերի մէջ էին մանում՝ պաշտօններ և դրամական գումարներ ձեռք բերելու դիտաւորութեամբ: Մեր խօսքը միայն նրանց ճաման է, որոնք մինչև վերջ հաւատարիմ և հետևողական մնացին իրենց նախորդների՝ Ռէշիլի, Ֆուազի, Զէմալի, Ալիի և Միդհատի պաշտպանած գաղափարներին :

Արտասահման ապաստանող՝ “Երիտասարդ Թիւրքիայ”ի գործունեութիւնը, իր զիսաւոր գծերի մէջ, հետևեալը եղաւ.

Զանալ վերահաստատել Միդհատեան Սահմանադրութիւնը՝ “Պարլամէնտը”, ինչպէս որ իրենք սովորութիւն

ունին ասելու : Եւ դրա համար նրանք զիմումներ էին անուած կ. Պօլսոյ և արտասահմանի մէջ եղած թուրք բարձրաստիճան անձնաւորութիւններին ու կրօնականներին :

Այդ մտքով նրանք յիշատակազրեր էին ուղղում նո՞յն խակ Սուլթան Հածիսին : Միւս կողմից՝ իրենց հրատարակած թերթերով նրանք աշխատում էին համոզել երկրի մէջ եղող թուրք ինտելիգենտներին և ուսանող երիտասարդութեանը, որ նրանք էլ ոյժ տան իրենց ձատութներին : Թիւրքիային իր ներկայ կացութիւնից գուրս բերելու և Սուլեյմանների օրօք ունեցած “փառաւոր” դիրքի մէջ զնելու համար — մի վերք՝ երբ ամբողջ եւրոպան դողում էր օսմաննեան բանակներից — նրանք միակ միջոցը համարում էին այդ Սահմանադրութիւնը :

Երբ այդպիսով որ և է յաջողութիւն չգտան, այնուհետև սկսեցին քննադատութեան առնել Սուլթան Հածիսի “անձնական” կառավարութեան եղանակը և պատահած ներքին խուզութիւնների, զեղծութների ու Թիւրքիայի ներկայ աննօրմալ կացութեան պատասխանաւուն միայն նրան բռնել :

Տեսնելով Սուլթանի յամառութիւնը և իրենց դէմ յարուցած հալածանքները, „Երիտասարդ” ները այնուհետև սկսեցին պաշտպանել Սուլթան Հածիսի գահընկեցութեան զարափարը: Մի ժամանակ նրանք շատ մեծ յոյս դրեցին եղիպատոսի Խալիֆի վրան, յուսարով որ նա իրենց կօգնէր, բայց այդ կողմից յուսախաբ եղան :

Նրանք մատուցանում էին յիշատակազրեր և եւրոպական պետութիւններին, խնդրելով որ դիւնավիտական ճանապարհով հաւաքական ճնշում գործ դնեն Սուլթանի վրան՝ “Պարլամենտ” ը վերահաստատելու : Այսուեղ էլ նրանք Թիւրքիայի ներկայ դրութեան միակ պատասխանաւուն Սուլթան Հածիսի անձնական կառավարութեան եղանակն էին համարում :

„Երիտասարդ” ների մեծ մասը բարեշրջականներ (évolutionniste) լինելով և հետեւողներ Օգիսս Կոնտի Փիլիպովայութիւնն այն էր, որ էվոլյուցիայից պէտք էր սպասել Օսմաննեան կայսրութեան մէջ արմատական փոփոխութեան առաջ գալլ,

և այդ փոփոխութիւնը պիտի կատարուէր յօգուտ տիրող՝ օսման տարրի: Եւ հենց այդ տեսակէտով էլ դէմ էին յեղափոխական շարժումների, այդ միջոցը անօգուտ և վնասակար համարելով այն հիմոնքով, որ կարող էր արտաքին միջամտութիւն լինել և խնդիրը վճռուել յօգուտ տիրուող՝ աւելի յառաջադէմ ժողովրդների, մինչդեռ թուրք տարրը գեռ բաւականին յետամնաց էր:

“ Ծերունի Թուրքեր ” ից ո՞չ նուազ թափով նրանք պայքար մղեցին հայկական, մակեդոնական, կրէտական, արաբական, ալբանական շարժումների ու այդ շարժումներին արտայացութիւն և ուղղութիւն տուող կուսակցութիւնների դէմ, ասելով որ այդ բոլոր վտանգում էին կայսրութեան աճբողջութեանը, միութեանը, անկախութեանը և կարող էին արտաքին միջամտութիւն հրաւիրել ու պետութիւնը անդամատել:

Բոլորը ի մի ամփոփելով “ Երիտասարդ ” ների գործունեութիւնը հետևեալ հիմոնքներն էր կրում.

1. — Գահնիշութիւն Սուլթան Համբարի :
2. — Պահպանութիւն Օսմանի ղինաստիի, Սուլթանականութեան և Խալիֆայութեան:
3. — Հակառակիլ օտար պետութիւնների միջամըսութեանը Թիւրքիայի ներքին գործերի մէջ, մասնաւորապէս դէմ լինել նրանց միջամտութեանը՝ հայկական, մակեդոնական, կրէտական, արաբական և ալբանական շարժումների պատճառով:
4. — Զանանաչել ո՞չ հայկական և ո՞չ էլ մակեդոնական խնդիրներ: Դէմ լինել, պայքարել բաղկացուցիչ ազգութիւնների շարժումներին՝ յանուն օսմաննեան կայսրութեան միութեան և աճբողջականութեան :
5. — Պաշտպանել Թիւրքիայի ներկայ ընկերական, կրօնական և տնտեսական հաստատութիւնները՝ իրենց աճբողջութեան մէջ :
6. — Ներքին քաղաքականութեան տեսակէտից՝ պաշտպանել և իրականացնել օսման ական ու թեան գաղափարը՝ թուրք նացի օնականի գմը՝ իր

բոլոր Հետևանքները վաղաբական բացարձական բացարձակ կեղունացումնն է մասնակի ամենահայտնի ապակեղունացումնն:

7. — Վերահաստատել Միդհատի Սահմանադրութիւնը, և իրենց Հեռաւոր ու ճօտաւոր իդերի իրականացումը նրա մէջը տեսնել և նրանով առաջ երթաւ:
- ✓ 8. — Արտաքին քաղաքականութեան տեսակետից՝ պաշտպանել Արմիրցիներին, Թունիսցիներին, Մարոկոցցիներին, Բուլղարիացի, Կրետէի, Կովկասի, Անդրկասպեան երկների և Հնդկաստանի մէջ եղող մահմէդականներին՝ իրենց տիրապետող կառավարութիւնների դէմ: Ամբողջ մահմէդական աշխարհը մի ընտանիքի զաւակ համարել և նրանց յոյսերի առանցքը դարձնել օսմանեան պետութիւնը, և այդ հիմունքով ջանալ սերտ յարաբերութիւններ մշակել մահմէդական անկախ և կիսանկախ տէրութիւնների միջն:
9. — Ծանօթացնել եւրոպացիներին իսլամութեան բարձր կողմերը և մահմէդական քաղաքակրթութիւնը:

Սա է եղած, իր գիտաւոր գծերի մէջ, այն գործունեութիւնը, որի շուրջը դարձել է "Երիտասարդ Թիւրքիա" արտասահմանի մէջ:

VI

"ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՑ,,Ի ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
ԵՒ ՄԻԴՀԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Բայց ինչո՞ւ "Երիտասարդ Թիւրքեր"ի յղացումները ամենափոքր չափով կականացնեցան, բնաւ իրականութիւն չստացան, չնայելով որ աւելի քան կ է ո դար է, որ իրենք պայքարի են բռնուած տիրող բռնապետութեան հետ: Կորով, աշխայժ, երբեմն, ցոյց են տուել, այդ անուրանալի է, ոմանք բազմիցս պետական ամենաբարձր և պատասխանատու պաշտօններ ել են վարել և քիչ չեն եղել

դէպքեր, երբ օսմանեան գահակաները լսել և հետևելու ակնյայտնի տրամադրութիւնն են ցոյց տուել ու բայցայցուրէն թոյլ տուել որ այդ կուսակցութեան գաղափարների տածիչները փոքրիկ ձիջուկ էլ կազմեն իրենց գահի շուրջը: Եւ բաւականին նպաստաւոր պայմանների ներբոյ, աւելի քան կէս դար ճարտնչելուց յետոյ, "Երիտասարդ Թիւրքիա"ն այսօր, օրինական հողը կորցրած, ունեցած աղղեցութիւնից բոլորովին զրկուած, ուժասաւու, ջլատուած մի շատ անհրշ ճարելի, ազօտ տեղ է բռնում համաշխարհային պայքարովների ընդարձակ շարքերի մէջ: Դրա համար աչքի առաջ պէտք է ունենալ իրենց ընդհանուր միտումը:

Ապահովուած, յարատեւ, զերծ ներբեն խռովութիւններից համարելը միայն այն պետութիւնը, որի ընդարձակութեան վրայ բնակողները բոլորն էլ կիմեն միաձոյլ, շահակից, ենթակայ միւնոյն հաստատութիւնների, ստորագասուած միւնոյն օրէնքների, վարչական կարգ ու կանոնի. իր ֆիզիքական ոյժի գերակշռութիւնից օգտուելով ինքնուրոյնութեան առանձին պայմաններ ունեցող ցեղերի և ազգերի զոյտութիւնը նեցուկները յափշտակել, աստիճանաբար տկարացնել, մինչեւ որ սրանք ժամանակի ընթացքում խապառ ճուռական իրենց անցեալը և անհատական աճըողջութեան գիտակցութիւնը ու տարիներ անցնելուց յետոյ, շնորհիւ տիրողի ձեռք առած միջոցների, լինեն անզիտակից բեկորներ, տիրող գահի շուրջը դառնան ու, իբրև անստանական արտավրող գործիքներ, այս վերջինիս գոյութեան յարատեւութիւնը ու զօրեղացումը իրենց հանրական նպաստակը գարձնեն, — զա շատ հին գաղափար է և բոլորովին հակառակ ներկայ քաղաքակրթութեան: Աղեքսանդր Մեծը այդ հսկայական գաղափարի իրականացման մէջն էր որոնում իր աշխարհատարած կայսրութեան ապահովութեան կռուանները: Այդ միւնոյն գաղափարովն է առաջնորդուել Ֆրանսիան, զեռ տասնեմէկերորդ դարից: Պրուսական արքայական տան ղեկավարիչ զիծը նոյն այդ գաղափարն է եղել, սկսած տասնեւթեցերորդ դարից: Ամէն ինչ հաւասարապէս տարրալուծով, ստեղծով, առաջ բերող պետական այդ գաղափարն են քարոզել Հեգէլը, Բլոնցլին՝ իբրև արտայայտիչ պրուսական ամենակարող

պետական գաղատիարի . նոյն այդ ճտքերով են տոպորուած այժմս էլ Համասլաւութեան և Համագերմանականութեան զառանցող ռահմիբաները և վերջապէս այդ ճիտումներով է շարունակ առաջնորդուել բռնապետական Թուսիան իր օրէնըսպական և փարչական բոլոր արտայալտութիւնների ճէջ :

— Աղդամիսի մի Հսկայական ծրագիր գործադրելու Համար Թիւրբիան շա՞տ խարխուլ է, այդ տեսակ տիտանական մի շէնք կառուցանելու Համար՝ օսմանեան պետութիւնը ամենաամնհրամեշտ տարրերը ի՞սկ չունի և այդպիսի ընդարձակ, լայնատարր միաբ իրազործելու Համար՝ "Երիտասարդ Թուրքեր" ը շա՞տ ուշ են ասսպարեզ իշել : Այդ տեսակ մի միտք՝ թէև շատ սահմանափակ շրջանի ճէջ, արդարեւ գործադրեց Օսմանը, ցեղակից, այլասեռ տարրերից մի ամբողջութիւն կազմելով, բայց զա հինգ զար առաջ էր և այսօրուայ պայմանները ա՛յնքան փոխուած են որ "Երիտասարդ Թուրքեր" ը հիմա այդպիսի ճտածնունքներ առաջ բերելով՝ Համաշխարհային ծաղր ու ծանակի առարկայ են զաւնում միայն, և իրաւամբ:

Եթէ "Երիտասարդ Թուրքեր" ը իրենց յրացած գաղափարները չկարողացան գործադրել և ամենափոքր չափով օգտակար դառնալ իրենց երկրին — այդ միայն նրա Համար, որ իրենց ճտածնունքի հիմունքը սխալ էր : Իբրև հետևող, փոխ առնողներ, թիւրք կարծեցեալ աղատամիանները գործեցին նոյն սխալները, ինչ որ իրենց ուսուցիչները :

Երոպական աղատամիանների հին դպրոցի ներկայացուցիչները երբ տեսնում էին քաղաքական, անտեսական մի Հաստատութիւն, օրէնսդրական մի կարգադրութիւն որ յաջող և բարերար կերպով էր գործել մի երկրի ճէջ, իբրև պարզ իդէալիստներ, առանց ամենանուազ չափով ուշադրութեան առնելու ճիշավայրերի տարբերութիւնը, ժամանակի տևողութիւնը և այն բոլոր աղակները, որոնք յառաջացրել էին խնդրի առարկայ եղող հաստատութիւնը — ճտածում և յանձնաբարում էին նոյնը միանդիմից փոխադրել իրենց յանկացած երկիրը, նախապէս Համոզուած լինելով, որ փոխառնովի Հաստատութիւնը, ինչպէս մի մեքենայ, նոյնքան յաջողութեամբ պիտի գործէր երկրորդ միշավայրում, ինչքան որ առաջն : Եւ որովհետեւ պատճութիւնը, գիտու-

թիմը , յաճախակի կրկնուած փորձերը ցոյց տուին այդ տեսութեան հիմնովն սխալ լինելը , ուստի ուսուցիչների սխալեռովը , սխալուեցան և՝ նրանց բոլոր հետևողները — այս պարագային , ճանաւորապէս , ”երիտասարդ Թուրքեր”ը :

Եթէ տարբեր անցեալ , տարբեր լեզու ու սովորութիւն ունեցող մի քանի ցեղեր շաղախուելով յառաջացրին մի ամբողջական ֆրանսիա , ֆրանսիական մի ընդհանուր ազգութիւն — այդ նրա համար՝ որ այնտեղ կար մի Իle de France : Քաղաքական իշխանութիւնը , օրէնքի ցանցերը դեռ հերիք չէին , որ տարասեռ ճանունքներից ընդհանրական գիտակցութիւն , միաձոյլ համայնութիւն յառաջանար , զրա համար անհրաժեշտ էին ճտաւոր , նվաթական և բարոյական ամուր կապեր , և Իle de France-ից բղխած լուսաւորութեան ու քաղաքակրթութեան ճառապայմբները , նրա ծոցից յառաջացացած ճտաւոր խնօսը , տարիների ընթացքում , արդարեւ , այնպէս թրեց , զանգեց զանազան ծագում ու անցեալ ունեցող տարրերը , որ Բասրը , Բրետոննը և այն , կորցրեց իր ցեղային անհատականութեան գիտակցութիւնը ու ինքն իրան սկսեց նկատել մի ճառ ֆրանսիական ազգի ամբողջութեան :

Ունէր Թիվրիան իր Իle de France-ը — Ֆիզիքական ոյժ , այո՛ , և միայն բացառապէս որա վրայ յենուելովն է , որ օսմանցի տիրողը կարող եղաւ տարբեր ցեղերի մէջ իր տիրապետողի գոյութիւնը պահպանել : Բայց ֆիզիքապէս այդ տիրողը , ճտաւորապէս , բարոյապէս ու ճնտեսապէս չէր տիրապետուած տիրուողներից :

Սանձարձակ բռնապետութեան , յափշտակութեան , կողուպուտի դժոխային կեղրոն զարձած Պօլիսը և սրա մէջ հաստատուած Գահը բարոյական ի՞նչ զօրեղ կապերով էր իր հետ կապել Հային , Յոյնին , Բուլլարին . . . որ սրանք մոռանային իրենց անցեալը , վանելին մէջներից ազգային անհատական գիտակցութեան զարափարը և զառնային գիտակց 0 ս ճ ան ց ի ն ե ր : Գաղափարների համայնութեան , զգացումների ամբողջական համանմանութեան ի՞նչ ազգակներ էր տուել օսմանեան կեամիքը : Թուրք լեզուն , զրականութիւնը այդ ազգերին ճառակարարել էր մի որ և է ճտաւոր մնունդ , բարոյական կապ , որ աւելի բարձր ու զօրեղ ,

աւելի վսեմ ու վճիտ լինէր, քան իրենց սեպհականը։ Մատառը արտայայտութեան ո՞ր ճիւղի մէջ Հայը, Յոյնը . . . բացարձակապէս բարձր և տիրող չեն եղել թիւրքերից։ — Թառամած վարդ, սիրատարի տոխակ, թարշամելու համար վերջալոյսի վերջին ճառագայթին սպասող ծաղիկ, կոյս, տարփական կեանք . . . աշա իր քերթողների և բանասաւեղծների երգածների զիսաւոր և տիրապետող առարկան։ Խակ այդ բոլորը կարո՞ղ էին մի որ և է չափով համեմատութեան մէջ մտնել այդ ազգերի մտաւոր արտադրութեան անցեալ ու ներկայ հրաշակերաների հետ, որ դարերի ընթացքում իրենց ուրոյն ազգեցութիւնն են դրոշմելունդների վրայ։ Այդ ազգերի բեղմնաւոր անցեալի փոխարէն թուրքը չունէր մի անջրգի անապատ։ Բայց այդ բոլորը տիրող տարրերը աենում և շօշափում էին իրենց հանապազօրեայ կեանքով։

Պրուսիայի կամ Ռուսիայի պատմութիւնը առաջնորդող գիծ ընդունելի աւելի քան զառանցանք կարող էր լինել նոյն խակ "Երիտասարդ" ների համար։ Դրա համար նրանք պատրաստուած տարրեր չունէին և աշագին կերպով յետ էին մնայել ժամանակի ընթացքից։

Խակ գալով Միոհասի սահմանադրութեանը, եթէ չընդունենք որ դա զիւանազիտական հրապարակային մի խաղէր, նշանակուած 1876-ի դէպքերի առաջը առնելու, այլ պետական մի հաստատութիւն, որի հեղինակները նպատակ են ունեցել այդ միջոցով հաստատուն մի կուռանի վրայ զնել թիւրքիայի զոյտութիւնը, ապահովել սրա բարգաւաճումը և աղատել երկիրը ներքին ու արտաքին աղէտներից — ապա, առանց մանրածանութեանց մէջ մտնելու, ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ այդ հաստատութիւնը շատ հեռու և անզօր է այդպիսի մի նպատակի համար։ Միոհասի սահմանադրութիւնը իր էութեամբ իրական և ո՛չ մի ծառայութիւն կարող է մասուցանել օսմանեան պետութեան, եթէ մի օր վերահաստատուի էլ և անարգել կերպով գործադրութեան մէջ մտնի։ "Երիտասարդներ"ը որ Համիտի և զիւանազէտների փէշերից կախ ընկերով իրենց գործունէութեան միակ նպատակն են անում այդ

"Պ ա ր լ ա մ է ն տ ա ի վերաբացումը — զրանով ոչինչ չհն գործած լինում իրենց երկրի ապագայի տեսակէտից , և չարաշար մխալում են , աւելի քան իրենց նախորդները , երբ կարծում են թէ դա ծիսակ զօրաւոր սպեղանին է Թիւրքիան բուժելու , թէ՝ ներքին և թէ արտաքին հիւանդութիւններից :

Համանում ենք թէ "Երիտասարդ Թուրքեր"ը իրենց միամտութեան մէջ ինչո՞ւ համար առանձին կարևորութիւն ու նշանակութիւն են տալիս "Թիւրքի ա յ ի գ ո յ ո ւ թիւնը վերջնական կորսից ապահով ապահով պահ գոյն պահութեան այդ գործութեան"ը :

Բայց այդ այդպէ՞ս է :

Միդհատի Սահմանադրութիւնը առանձնապէս սիրելի է "Երիտասարդներ"ին , որովհետեւ նա , իբրև թէ , կարող պիտի լինի վերջ տալ եւրոպական ազգերի միջամտութեանը Թիւրքիայի ներքին գործերում և ջնջել այն բոլոր capitulation-ները և ճամանաւոր իրաւոնքները , որոնք Թիւրքիան եւրոպացու ստացուածքն են դարձերեւ :

Բայց այդպիսի մի հսկայական ծրագիր գործադրելու համար ընդհանուր ցանկութիւնները , բառերը զեռ հերիք չեն : Հարկաւոր են յարատել պատճառներ , զօրել աղղակ-ներ , որ եւրոպական պետութիւնների դարերի ընթացքում ձեռք բերած արդիւնքները այդպէս դիւրութեամբ մէջտեղից վերցուեին : Արդիւնքը ջնջելու համար , հարկաւոր է նախ ջնջել նրա յառաջացնող պատճառը , պայմանները : Արդ , վերացել են , կամ այդ Սահմանադրութիւնը ինչպէս միանգամբից պիտի վերացնէր այն բոլոր պատճառները , որոնք առիթ են տուել և առաջ բերել capitulation-ները : Եթէ այդ capitalization-ները դարերի ընթացքում իւրաքանչիւր պետութեան դէպի Թիւրքիան ունեցած իրաւոնքի սահմանն են կազմում — ապա մի պետութիւն իր դարեւոր իրաւոնքները այնքան էլ հեշտութեամբ ձեռքից բաց չի թողնիլ , որքան որ բարեմտարբար ենթադրում են "Երիտասարդները" : Հահազարդուուղ պետութիւնների միացեալ ոյժին համապատասխան ոյժ ունենալու էր Թիւրքիան այդպիսի մի իդականացներու համար : Խոկ այդ զօրութիւնը ունենալուց առաջ կարկառ պիտի լիներ որ օսմանեան պետութիւնը ո՛չ

միայն արդեամբ ճտած լինէր եւրոպական քաղաքակրթութեան շաւզին մէջ, այլ որ ինքը արդէն այդ քաղաքակրթութեան տարրերից մէկը դարցած լինէր: Բայց այդ բոլորը այս ըսպէիս երազ չէ՝ “Երիտասարդներ” ի համար, եթէ մի քիչ ճանաչում են իրականութիւնը: Իսկ մի փոքր հեռուն երթալով յարակարծիք չէ, եթէ ասենք, որ capitulation-ները և Թիւրքիայի մէջ Եւրոպացիների ունեցած ձեռնարկները ու նրանց զրած զրամագլուխներն են եղել ամենազօրաւոր պատճառը, որ մինչև յարդ Թիւրքիան գոյութիւն ունի, եթէ ո՛չ նա արդէն շատ փաղուց զօրաւորին կուլ երթացած կլինէր. միւս կողմից, նոյն այդ capitulation-ները և Եւրոպական պետութեանց տնտեսական ու քաղաքական հակածարտ ձեռնարկները ու շահերն են՝ որ պետութեանց մրցման ու նախանձի յարատե մնունդ դառնալով՝ կազմում են զիսաւոր առանցքը թրքական դիւնանագիտութեան: Օսմաննեան պետութեան հոգեվարքայն գոյութիւնը շարունակել կարողանալու համար:

Այդ Սահմանադրութիւնը մասնաւորապէս ցանկալի է՝ “Երիտասարդներ”ին, զի նրանք պարզմարեէն հաւատացած են, որ այդ միջոցով կարող պիտի լինեն բոլոր Թիւրքիան մի ամբողջական ծածկոցի տակ առնելու և՝ աստիճանաբար՝ մի ա զ գ ա յ ն ո ւ թ ե ա ն վերածելու: Դրանով նրանք պիտի անհետացնէին Թիւրքիան կազմող ազգերի միջից ամէն աստրաւթիւն, ջնջէին փոխադարձ թշնամութիւն, հակառակութիւն, ապստածբութիւն և անջատումն առաջ բերող ամէն պատճառներ: Եթէ մի ցեղ, մի ժողովուրդ ունենար անբաւականութեան որ և է զրդապատճառ, նա այլև չափատի զիմէր զինքի կամ Եւրոպական այս ու այն պետութեանը կամ նրանց ամբողջութեան միջամտութեանը, — ո՛չ, զա ա զ գ ա յ ի ն, պ ե տ ա կ ա ն դաւաճանութիւն կլինէր, այլ օ ս ձ ա ն ե ա ն վ ե հ ա զ գ ո յ ն ա տ ե ա ն ի ն՝ Պարլամէնտին, ուր բազմած էին իր ներկայացուցիչները: Ուրեմն թղթի մի հարուածով՝ “Երիտասարդներ”ը ցանկանում էին իրագործուած տեսնել այն, ինչ որ անկարող եղանակներում իրենց աշխարհակաների սուրբ և զանազան ժամանակներում կատարուած աշխելի կոտորածները:

" Մերունիներ "ը ճտածում էին խռովարար ժողովուրդներին ուղղութեան բերել սրով, իսկ " Երիտասարդներ "ը՝ պարևածեն տական ճեծածանութեածք, և Միղհատի Սահմանադրութիւնը այդ միջոցը իրենց տալիս էր:

Խորհրդարաններից առաջինը՝ Պատգամաւորական Ժողովը պիտի ընտրուէր Օսմանեան ազգից, իսկ ընտրելու և ընտրուելու իրաւունքները ընտրողական այնպիսի սակի (cens) վրայ էին զրուել, քաղաքացիական այնպիսի պայմաններով էր շրջանակուել, որ ոչ միայն ճահճեղականները, ճամանակապես թուրքերը, բացարձակապէս ջախջախիչ ճեծածանութիւն պիտի կազմէին, այլ որ այդ ճեծածանութիւնը բազկացած պիտի լինէր պետական զանազան պաշտօնեաններից երկիրը կոփով, ժողովուրդը հարստահարով բէկերից, աղաներից, փաշաններից և նմանօրինակ ճակաբոյներից: Ուրիշ ազգութիւններ, առանձնապես քրիստոնեանները, հազիւնրա ճէջ էն շատը 5-10 պատգամաւոր ունենային: Արդ, բողոքող, դժողովների ներկայացուցիչները ո՛րքան կարող պիտի լինէին իրենց բողոքարկու ազգակիցներին պաշտպաններու 5-10 ճայնով լինդիմ 240ի ազգային-անհատական ինպիրների տեսակէտից: Բնականարար ճեծածանութեան իրաւունքը, նրա արտայայտած կամքը տիրապետող, անվիճելի պիտի լինէր, զի այդ էր ներկայքաղաքակրթութեան տուած պայմանները՝ համանման պարագաներու: Իսկ այնուհետև դժողովները և իրենց ներկայացուցիչները ո՛չ ապստամբելու և ո՛չ էլ օտար պետութիւններին զիմնելու իրաւունք այլևս պիտի ունենային, — նրանց պիտի մնար ճիայն կամայ ակամայ հնազանդել ճեծածանութեան՝ իրենց հակառակորդների՝ վճռին ու նրա որոշմանը հետևիլ:

Այդ դեռ բաւական հատու և ամէն ինչ երաշխաւորող զէնք չէր երեւում սահմանադրականներին: Ուրիշ ազգութիւնների պատգամաւորներից ծին, օժտուած լինելով Կիկերոնեան ճարտասահութեամբ, Կատոնի իմաստութեամբ ու Ողիսևի խորամանկութեամբ՝ գուցէ կարող լինէր ճեծածանութիւնը ծի կերպ իր յետևից քարշ տալ և փոքրամանութեան կամքը յաղթանակել տալ, հակառակորդների՝ վճռին ու նրա որոշմանը հետևիլ:

եան ազգի մնայուն շահերին, ուստի հարկաւոր
էր մի քիչ էլ զգոյշ լինել:

Եւ ահա սահմանադրականները գահակալող սուլթանների
բացարձակ կամքին էին թողնում կազմել մի Ծերակոյածութիւնները (Sénat), բաղկացած 300 անդամից: Անշուշտ, դժուար չէ
դուշակել այն ծառայութիւնները և զործերը, որ նրանք
պաշտօն պիտի ունենալին կատարելու: Երբ անդամների
յատկութիւնները ու նրանց արժանաւորութիւնները տեսնող,
զնահասողը և ընտրողը Սուլթանները պիտի լինեն — ապա
զիւրին է կանխապէս հասկանալ այդպիսի մի մարմնի բաղ-
կացութիւնը, սահանձելիք պետական գործերը ու կատարելիք
զերը: Մի անգամ երբ այդ մարմինը անքողջապէս պիտի
կազմուի սուլթանների բացարձակ կազմի որոշմանք, արդ,
ո՞ր արամարանութեամբ, ո՞ր ազգերի համանձան օրէնքով չի
կարելի եզրակացնել, որ ընտրուած ծերակուտականները չեն
լինիլ սուլթանների բացարձակ հլու, հնագանդ, հաճոյակա-
տար սորուկները, հետեւաբար գահակալի իղձերի թարգմանը
ու արտայայիչը և ո՞չ թէ ծովովրդի, որի անունով իրենք
պիտի խօսեն, որոշում կայացնեն: Իրենց գոյութիւննը բռնա-
պետին պարտական լինելով՝ նրանք բռնապետի էլ գործիքը
պիտի լինէին դէպի այն ծովովորդը, որից իրենք ո՞չ մի
կախումն, որի հետ իրենք ո՞չ մի առնչութիւն ունեին:

Օսմաննեան այդ եզրակի Ծերակոյածի մէջ հայկական ծա-
գում ունեցող օսմանցինները — չէ՞ որ ամէնքի ազգայնու-
թիւնը օսմաննեան պիտի լինի — ամենայն հաւանականու-
թեամբ կունենան Տատեաններ, Նորատունկեան-
ներ — նստած Զէփէտ, Սայիդ, Մահմուտ Զալալէպին փա-
շանների կողքին. Աշբականներ, Օբրաննեաններ, Մամբրէններ
— բազմած Խւէմանների, Միւֆտինների և Շէյս-խուլ-խուլամ-
ների կշտին: Օսմաննեան պետութիւնը ո՞չ թէ 300, այլ
3000 այդպիսի արժանաւո՞ր մեծամեծներ գտնելու շտեմարանը
ունի: Այդ կողմից ո՞չ մի պետութիւն նրա հարստութեանը
չի համնիլ:

Բայց զրամուշ ի՞նչ. “Երիտասարդ” սահմանադրական-
ները զրամուշ իրենց ո՞ր նսպատակին՝ մազաշափ անգամ հա-
սած կլինեն:

Բայց չէ, դեռ կայ վտանգ, որովհետև մի օր այնպիսի
մի հայ պատղամաւոր կարող է երևիլ, որ Կիկերոն, Կա-
տոն, Ոլիսես իր մէջը ամփոփելով համգերձ, ունենար էլ
Աշրդեանների, նուրբեանների էլ հոգին, նրանց նմանա-
մտութիւնը և յանկարծ հոգեփոխութեան ճաքուր օղակներից
անցնելով՝ դառնար իր ազգի շահերի ջերմ պաշտպանը և
299 իր պաշտօնակիցների հաւանութիւնը ստանար Ստորին
Խորհրդարանի իր հայ աղբակցի առաջքերած որոշումը շա-
րունակելու, որպէսզի օրէնքի ոյժ ստանար:

“Երիտասարդներ” ը այդ պատահականութիւնն էլ են
աչքի առաջ ունեցել և նրա ճաման վաղօրօք հոգացել, —
դեռ կար Սուլթանների ա մ ե ն ա կ ա ր ո ղ կամքը:

Զարմանալի տրամաբանութեամբ են օժտուած եղել “Երի-
տասարդ Թիւրքիայ”ի պարագլուխները: Երկրի մէջ եղած
ամէն չարիբների նախապատճառը Սուլթանը ու սրա կառա-
վարութեան բացարձակ միավետութիւնը համարելով հան-
գերձ, իրենց յոցած նորօրինակ Սահման ա ն ա ն ա դ ո ո ւ-
թ ե ա ն մէջ բնաւ չեն խորհած մի որ և է հակակշիռ
տրամադրութիւն մէջ բերելու, որ կարող լինէր՝ շատ ու
քիչ, իրականորէն, օսմաննեան գահականների կամքի բա-
ցարձակութիւնը արգիլերու իրաւունքը ունենար:

Միավետական սահմանադրական կառավարութեան եղա-
նակ ունեցող ամէն երկիր իր Խորհրդարաններով միակ
նպատակ է ունեցել հակակշունչ, չեզոքացնել և, ի հարկին,
բոլորովին անզօրութեան վերածել երկրի Պետի կամքը և
նրա տեղ զնել՝ Խորհրդարանների միջոցով ներկայացած՝
ժողովրդի կա՛մ հակակշիռ, կա՛մ գերակշիռ և կա՛մ ամենա-
կարող ձայնը: Եւ այդպիսի իրաւունք, կարողութիւն ձեռք
բերելու համար, այդ երկիրները գետերի նման են հոսեցրել
իրենց լաւագոյն զաւակների արիւնը:

Իսկ թէ ինչո՞ւ “Երիտասարդ” սահմանադրականները
այդպիսի մի տրամադրութիւն իրենց յօդուածների շարքերի
մէջ մտցնելուց հեռու են մնացել — այդ պիտի բացարել
կա՛մ աղիտութեամբ, կա՛մ նենգամտութեամբ, որ աւելի հա-
ւանական է, և կամ բարեմտօրէն ենթագրելով թէ օսման-
եան գահականները միշտ եղել են և շարունակ էլ պիտի

լինեն գորովազութ հայրեր, իսկ հպատակները՝ հարազատ դաւակներ, —և այդ բացատրութիւններից որը որ ընդունուի, դարձեալ “ Երիտասարդներ ” ը իրենց առաջը եղած չարաղէտ հակասութիւններից չեն կարող ազատուիլ:

Գանգատուել Սուլթաններից, երկրի կորստեան պատճառ նրանց համարել և դրա համար ել ժողովրդի ներկայացուց-չութիւնը իմնդրել, իսկ սրան միայն անդօր խորհրդատու (consultatif) պաշտօն տալ և ուրիշ ոչինչ — դա մտքի աւելի քան անկանոնութիւնն է : Պատգամաւորական ժողովը, Մերակոյտ ի՞նչ օրէնք, ի՞նչ որոշում որ ուզեն՝ կարող են ընդունել, բայց նրանց քուէարկած օրէնքները, տուած որոշումները՝ գործադրութեան մէջ մտնելու համար՝ բացարձակապէս կախում ունեն գահակալի կանգնից . սա կարող է ընդունել, կարող է և մերժել, նայելով իր ինքնիշխան կանգնին, որ ծիակ, ամենակարող և ծայրագոյն ատեանն է, և որի որոշումը վերջնականն է : Եթէ հայ ամենակարող պատգամաւորի առաջարկը անցաւ Խորհրդարաններից, դեռ սա իր առաջ ունի ամենի Վեհապետը, բացարձակ Տէրը : Իսկ եթէ սա չհաճածայնի՞ : — Այն ժամանակ, երկի, իր խօսքը յառաջ տանելու և օրէնքի ոյժ տալու համար, նա կարիք պիտի ունենայ զինուորական մի այնպիսի ոյժի, որ գերակշխու լիներ սուլթանների բանակներից : Այլպէս իր առաջարկը, օրինագիծը, դատապարտուած է յաւիտենական առաջարկ, յաւիտենական օրինագիծ մնալու :

Գուցէ մեղ պատասխաննն “ Երիտասարդներ ” ը, որ վերեկից շնորհուածը, տիրապետող Տան տուածը այլքան էլ հազիւ լինի : — Համաձայն : — Բայց դրանով ի՞նչ շահ, ի՞նչ օգուատ, թէ՛ բուն Թիւրքիային և թէ՛ նրա բաղկացուցիչ ազգութիւններին : Մի հաստատութիւն միայն այն ժամանակ կարող է օգտակար լինել, երբ իր գոյութեան առան ձին իրաւունքը, կատարելիք մասնաւոր պաշտօնը ունի :

Եւ այս բոլորից յետոյ կատակերգութիւն չէ՞ աւելացնել “ նախարարական պատասխանաւութիւն ” : Պատասխանաւութիւն որի՞ն : — Այն Խորհրդարաններին, որոնց ձայնը բացարձակապէս և ո՞չ մի նշանակութիւն ունի տիրող բըռ-նապետի առաջ :

Այժմ հասկանալի՞ է այն դառն հեղմութիւնը, այն կաս-
կածոտ ժպիտը, որ արձակելև դեռ շարունակում են արձա-
կել եւրոպական պետութեանց այն բոլոր ներկայացուցիչները,
որոնք առանձին պատասխանատութիւն և իրաւունք ունեն
դէպի այն ամէնը, ինչ որ կատարում է Թիւրքիայում՝ երբ
ինդիրը գալիս է Միդհատի Սահմանադրութեանը :

Կա՞յ մի պատճառ, որ զարերի ընթացքում ճնշուած,
Հարստահարուած և, իրերի բնական ընթացքով, շարժման
մէջ մանող ազգերի պայքարողների ժպիտը ևս արգիլէր,
երբ լսում է Միդհատեան Պար լա մ է ն տ ի անունը : —
Երիտասարդները ը վերջապէս պիտի համոզուեն, որ երբ իրենց
հայրերի ե ա թ ա դ ա ն ը կատարելապէս անկարող եղաւ
անհետացնել, ձուկել, լուել տալ հպատակ ազգերին, ապա
նո՞յն անկարողութեան, նո՞յն անընդունակութեան պիտի դա-
տապարտուի և՛ իրենց գծագրած պար լա մ ե ն տ ա կ ա ն
մ ե ծ ա մ ա ս ն ո ւ թ.ի ւ ն ը : “ Երիտասարդ Թիւրքիա ” ն
պիտի մտածէր, աշխատէր վերացնել, ներկայ քաղաքա-
կըրթութեան մատակարարած ծիչոցներով, այն բոլոր պատ-
ճառները, որոնք առիթ և միանգամայն իրաւունք էին
տալիս հպատակ ազգերին դժգոհելու, ապստամբելու և ապա
իրենց գոյութիւնը բոլորովին անջատել ձգտելու օսման-
եան պետութիւնից : Աշա՛ թէ ինչ պիտի լինէր իրենց յղա-
ցումների հիմունքը, եթէ իրօք ցանկանում էին իրենց եր-
կրիմ օգտակար լինել, նրա յարաւուութիւնը ամրապնդել, և
ո՞չ թէ զանազան հնարինացութիւններով իրենց հայրերի
բռնութիւնը պար լա մ է ն տ ա կ ա ն մ ե ծ ա մ ա ս ն ո ւ
թ ե ա ն ք օ զ ի տ ա կ ե ր և ա ն ք ե ր ե լ ու : Եւ միթէ հաս-
կանալի չէ, որ օսմաննեան բանակների շարքերից ճեղքող, անց-
նող և իրենց ձայնը լսեցնել տուող Ազգերը, նոյնքան ընդունակ
և կարող կլինեն իրենց բողոքի, իրենց իրաւունքի ձայնը
լսեցնել տալ, անցներով և՛ պարբամէնտական մեծամասնու-
թեան պատնէշից, որով նորից իրերի դրութիւնը կլինի
նոյնը, ինչ որ առաջ, և “ Երիտասարդներ ” ը բոլորովին
ի զուր աշխատած կլինեն ու առաջին անգամ իրենք հիսու-
թափուած, երբ իրերի պահանջին միանգամայն անհամապա-

տասիսան այդ կարկա տն ած Սահմանադրութիւնը ճի օր գործադրութեան մէջ մտնէր:

Եթէ "երիտասարդ Թուրքեր"ը ցանկանում են որոշեալ բարերար զեր խաղալ իրենց պատմութեան մէջ, եթէ իրօք նտածում են օգտակար լինել իրենց երկրին և նախանձաւ խնդիր՝ նրա գոյութեան հիմունքները ամրապնդելուն, ապա նախ պիտի աշխատեն աւելի՛ ողջ ծառորէն հետազոտելու, աւելի՛ լրջօրէն գնահատելու, ի մօտոյ ճանաչելու իրականութիւնը՝ օսմանեան երկրը, նրա բաղկացուցիչ ազգութիւնները: Այդ անհրաժեշտ պայմանները կատարելուց յետոյ է միայն՝ իրավանութեան մատակարարած ծիակ հողը իրենց ուղարկիծ ընդունելով՝ որ պիտի ջանան կազմակերպուել իբրև պայքարող քաղաքական մարմին ու իրենց նպատակ անեն տապալ ել, յեղափոխել տիրող հինգած, փոտած պայմանները ու նրանց տեղը գնեն իրերի խսկական պահանջներին ամենայնիւ համապատասխան այնպիսի նոր հաստատութիւններ, նոր կարգեր, որից հաւասարապէս կարող լինեն օգտուել թէ՛ բաղկացուցիչ պայքարող ազգութիւնները և թէ՛ ամբողջ Թիւրքիան՝ առանց ցեղի, կրօնի և դասակարգի խտրութեան:

VII

"ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՅԻ" Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Պատմական անտուրանալի փաստ է, որ "երիտասարդ Թիւրքիան" աւելի քան կէս դար իր ունեցած զրական և քաղաքական շարժումներով ցանկացել է հին, խարխած, կործանուելու վերահաս վտանգի մէջ գանուող Թիւրքիայի տեղ տեսնել մի "երիտասարդ" վերածնուած, ներքին անդորրութիւն վայելող և անխուսափելի անկումից զերծ՝ զօրեղ և ամրապնդուած Թիւրքիա:

Բայց որ իր իզերը, ճղած բանակութիւնները, պայքարները զրական և ո՞չ մի լուրջ հետեւանք են ունեցել մինչև այսօր — այդ էլ մի անհերքելի իրողութիւն է: Խսկ թէ իր փայտած նպատակին հասնելու համար դարձեալ նա յարած մնայ իր արդ էն դաւանած և հրապարակ դրած սկզբունք-

Ներին և միշտ շարունակէ հաւատարիմ մնալ մինչև ցարդիր հետապնդած ուղեգծին, չշեղել նրանից — զա էլ անկասկած է, որ երբ և իցէ անկարող պիտի լինի ո ը ո շ, հաստատուն և օ գ տ ա կ ա ր մի արդիւնք առաջ բերել: Անցեալի մէջ մի քանի անգամ կրկնուած փորձերը, կատարուած իրողութիւնները, իրերի ընդունած ընթացքը և իրենց ի'սկ պայքարի պատճութիւնը՝ միացած Մեծ Պետութիւնների իրենց նկատմածք ունեցած աննպաստ գաղափարին՝ այլևս անսարարակուսելի են դարձնում մեր այս ասածի ձըշմարտութիւնը:

Թէ որո՞նք եղան “ երիտասարդ թիւրքիայ ”ի պատճական սխանները, — այդ մասին ի նկատի առնենք միայն զիսաւորները.

Մտաւորական, գաղափարական հոսանքների տեսակէտից՝ թուրք ժողովրդի եթէ ո՛չ ածբողջութիւնը, գէթ նրա ջախջախիչ մեծամասնութիւնը, մինչև այսօր, գտնում է զարգացման այն շրջանի մէջ, ինչ որ էին երովուական ազգութիւնները Միջին Դարերում: Մեր խօսքը անշուշտ, թուրք այն շատ սահմանափակ միջուկի մասին չէ, որ ձգտում է ունեցել, արևմտեան ազգեցութեան ներքոյ՝ ազատուիլ շրջապատող մտաւոր կաշկանդումներից. մեր խօսքը այն մեծամասնութեան մասին է, որ հասարակ ժողովուրդ անունն է կրում և Փատիշահութեան ու Խալիֆութեան սիւնն է համարում: Արդ, այն ո՞ր գասակարգն է եղել, որ ամէնից աւելի ջանացել է թիւրքիան և մասնաւորապէս թուրք ժողովուրդը խաւարամտութեան ծածկոցի տակ պահել շարունակ և նրան կաշկանդել հին կեանքի մէջ, — կրօնական, կղերական, հոգևորական գասակարգը: Մրա ազգեցութիւնը բացարձակ և տիրապետող է եղել թուրք կեանքի բոլոր արտայայտութիւնների մէջ: Եւ աշահ հէնց խնդիրն էլ այն է, որ այդ գասակարգի անհակակշիռ ազգեցութիւնը արածագծօրէն անհաշտելի է նորագոյն պետութեան գաղափարի հետ: Թուրք կրօնականը, որպէս զասակարգ, զեռ իր թագաւորութեան մէջն է. նա իր ազգեցութիւնից ո՛չինչ ունի կորցրած: Մոլան, Պաղին, Շէյխ-իւլ-իսլամը զեռ ոյժեր և շա՛տ գօրաւոր ոյժեր են. զեռ մի կողմ թողնենք Խալիֆութեան գաղափարը:

Արդ, ամէն երկրի երիտասարդներ, ասպարէզ մտած օրից, իրենց առաջին գործերից մէկն են արել այդ դասակարգի իւրացրած իրաւունքների, արտօնութիւնների և գաղափարաբանութեան դէմ կուտել, խորակել նրա ազդեցութիւնը, մամնաւորապէս՝ քաղաքական, անտեսական և ընկերացին խնդիրների նկատմածք։ Ժողովուրդը դուրս բերել կրօնի և կրօնականի կապահներից, —սա է եղել նոր գոյն պետութիւն նաև առեղծել ձգտովների կուռի մի երեսը։ Սակայն այդպէս չարեցին թուրք "Երիտասարդ" ները. նրանք մինչեւ վերջ ո՛չ միայն կրօնական դասակարգի դասակարգային իրաւունքներին, արտօնութիւններին, նրա գաղափարաբանութեանը զղիազն և որ և է քննադատութեան նիւթ չարեցին ու չաշխատեցին նրա ազդեցութիւնը նսեմացնել և վեսակարութիւնը երեւան գնել, որպէս արտօննեալ մի դասակարգ, այլ՝ ընդհակառակը՝ նրա գոյութեան և դասակարգային իրաւունքների պաշտպանութիւնը մինչև անգամ իրենց սկզբունքներից մէկը գարձրին—ինչ որ սիսալ և մե՛ծ սիսալ էր։ Նորագոյն պիտութիւն և կրօնական դասակարգի անհակակշռելի զիրք՝ զրանք իրարու խորտակող զօրութիւններ են։ Թիւրքիան երթաւարդ այդ դասը չպէտք է մոռանային, երբ խօսում էին քաղաքակրթութեան անունով։

"Երիտասարդ Թիւրքիա"ն, սկզբից ի վեր, մի ուրիշ կարեւոր սիսալ էլ արաց։ Ո՞վ, ո՞ր դասակարգն է, որ կրօնականի հետ միացած շարունակ քամել է թուրք պետութեան և Թիւրքիայի մէջ ամփոփուող ժողովրդների կենսական ոյժը, —կալուածատէր, ֆէօդալ, ազնուական, աղայական դասակարգը։ Եւ սակայն, "Երիտասարդ" ները որ և է ժամանակ, իրենց պատճութեան ամբողջ շրջանում, մի կծու խօսք անգամ չունեցան դրանց դէմ։ Նոր պետութեան գաղափարը պաշտպանովը այդ դասակարգերի և նրանց ունեցած իրաւունքների դէմ էր, որ կուռի պիտի բռնուէր և իր սկզբունքներից մէկը պէտք է անէր նրանց արտօնութիւնների ոչնչացումը։ Սակայն "Երիտասարդ Թիւրքեր"ը ո՛չ միայն այդ չարեցին, ո՛չ միայն Թիւրքիայի ոյժերը սպառող և արտադրող դասակարգերի արիւնը ծծող այդ վաճբիր դասա-

կարգի դէմ նրանք հակառակ խօսք չունեցան ասելու, այլ
նրանց իրաւունքներին և ձեռք բերած զիրքին ճաղաշափ
անգամ դիպչել չուզեցին:

Թուրքը պետութեան ողնաշարը եղած է զիւղացին,
երկրագործ զասակարգը : Բայց "Երիտասարդ Թիւրքիա" ո՛չ
միայն այդ զասակարգի իրաւունքները չպաշտպանեց, նրա
կրած տառապանիքներին արձագանք չսունեց, այլ նրա վիճակը¹
բարելաւող ծի բառ անզամ չըլեց իր ծրագրի մէջ նոյնը և
ընդհանուր աշխատաւոր, արհետաւոր, գործաւոր զասակարգի
վերաբերմանը : Սակայն իրողութիւնն է, որ այսօր, առանց
աշխատաւոր և զիւղացի զասակարգերի՝ ծի պետութիւն ար-
մատապէս փոխել և նորագոյն հիմունքների վրայ գնելը²
անհնարին է. իսկ "Երիտասարդ" ները այդ գերազանցապէս
նորոգիչ ազգակները ո՛չ միայն անտես առան, այլ նրանց
Ճանաչել իսկ չուզեցին: Սա էլ ծի ուրիշ սիալ:

Իրական կեանքի արտայայտիչը լինել ձգտող և նոյն այդ
կեանքի մէջ նոր զաղափարներ ներմուծել աշխատող ծի
մարմին զրական գործ կարող է յառաջացնել միայն այն
ժամանակ, եթե կը կազմակերպուի որպէս քաղաքական կու-
սակցութիւն և յարատե շփում կունենայ ժողովրդի հետ :

"Երիտասարդ Թուրքեր"ը ո՛չ միայն չկազմակերպուեցան
որպէս քաղաքական կուսակցութիւն, այս եղի լայն առու-
մովը, ո՛չ միայն երկրի ամէն կողմերում իրենց ճիւղաւո-
րումները չունեցան, այլ նրանք ծի տեսակ ազնուապեսական
զիրք բոնելով խուսափեցան բուն ժողովրդի մէջը մտնելուց և
նրան կազմակերպելուց : Իրենց գործունեութեան ամենամեծ
շրջանակը եղաւ Պօլիսը և պաշտօնատարների միջավայրը.
այդ շրջաններից նրանք դաւրս չեկան ու վրա համար էլ խորթ
զիրք ունեցան նոյն իսկ թուրք ժողովրդի մէջ . դեռ ծի կողմ
թողնենք միւս բոլոր այլասեռ տարրերը, որոնք "Երիտա-
սարդ" ներից օգտակար սպասելիք և յուսալիք ո՛չինչ չտեսան:
եւ այստեղ էլ սիսալը, մե՛ծ սիսալը դարձեալ "Երիտա-
սարդ" ների կողմն է: Որովհեաւ բաղկացուցիչ ազգութիւն-
ների ձգտումները և շարժումները ո՛չ միայն իրենք չաշխա-
տեցին իրապէս Ճանաչել և ուստիմնասիրել, ու նրանց
արդար պահանջներին պաշտպան հանդիսանալ, այլ իրենք,

սկզբից ի վեր, մի տեսակ նախապաշարեալ ընթացքի մէջ մտան և " Ներունի " ներից ո'չ պակաս թափով չամացին դժողովն մողովուների բողոքը և շարժումները խեղդել, նոյն խակ ամենապատապարտելի ծիջոցներով:

Բայց մի՞թէ, իրաւ, բաղկացուցիչ ժողովուների ձգտումները և պահանջները անիրաւացի էին և չունեին իրենց խորունկ պատճառները. մի՞թէ " Երիտասարդ " ները իրենց իրաւունք պիտի տայլին աշխաղիտիմական գաղափարների մէջ մանելու, եթէ իրօք նրանք ճանչյած լինեին իրականութիւնը և փոխանակ ամբողջ Օսմաննեան պետութեան մէջ նիայն ճի աղ զ ու թ ե ա ն՝ Օ ս մ ա ն ա կ ա ն ու թ ե ա ն՝ գաղափարին հետապնդելու, ջանային աւելի լայն հիմունքների վրայ զնել իրենց գործունեութիւնը՝ բաղկացուցիչ ազգութիւնների պատճանական իրաւունքը ճանաչել, ծրագրել նրանց համար էլ գարգացման և յառաջադիմութեան ծիջոցներ և այդ հիմունքներով ձգտել վերաշնել թրքական պետութիւնը :

Մի փոքր մանրամասնենք այդ խնդիրը, որ " Երիտասարդ " ների բոլոր սխաներից ամենամեծը եղաւ՝ սկզբից ի վեր:

Նայելով Թիւրքիայի վրայ՝ աշխարհապահական, քաղաքական տեսակէտից, աչքի առաջ բերելով նրա ամբողջութիւնը՝ իբրև պետութիւն անհատ, ուշազրութեան առնելով նրա ներբին բաղկացուցիչ ծասունքները, ունեցած քաղաքական, տնտեսական, ընկերային վիճակը, մի խօսքով առնելով Թիւրքիան այնպէս, ինչպէս որ էր, հարց է՝ թէ արդեօք " Երիտասարդ Թիւրքիայի ճագան օրերում կարելի չէ՞ր, հնարաւորութիւն չկա՞ր առաջ բերելու՝ համեմատաբար՝ ապահով, հաստատուն կրուանների վրայ զրուած, քաղաքական ներբին անդորրութիւն վայելով՝ վերակաղմուած մի Թիւրքիա, որ պահպանէր իր ուրոյն գոյութիւնը՝ իբրև պետութիւն, ազատուէր վերջնական կործանումի մղջաւանջից, որքան որ դա անխուսափելի էր նկատուած ներբին խնդիրների տեսակէտից, և կարող լինէր իր ամբողջութիւնը կազմող ոյժերի վրայ յնուելով արտաքին հարուածների, օտար կանոնների առաջը դիմագրաւելու:

Մեր պատասխանը զրական է, եթէ " Երիտասարդ Թուր-